



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



76

2

L-85

my. 26

2010

# ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ

Ա.

Պ ԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԴԱՍ ՏԱՍՆԵՐՈՐԴ



ԻԹԷՆԴՈՍԻԱ.

Իսպարսկի Խաչիպեան Ուսուցնարանի Հայոց

1861.



սոսրիքս յորմիմ մէջիցն բուքամամա՛ր ցտմբաճամ գոյան  
-մմնդայրաւ յո միողմնառած 'ցնկոտաքրա դոյ գոյոց , յայն զո  
ճամիք ամի մարմնանկայի զո աքոս՝ : զ՛ յիբոն ծ՛ յմայի՛ն ցիող  
-ոք յո մարտաչ , մարմնա փառմլա շղմեռնն յո մգիքոցո աքոս՝  
յամիկայի շնքմնա

### Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ա Ս Տ ՈՒ Ա Շ Ա Շ ՈՒ Ն Չ Ս ՈՒ Բ Ա Գ Ր Ո Յ

#### Գ Ա Ս Տ Ա Ս Ն Ե Ր Ր Ր Դ .



ինչեւ ցայժմ տեսանք որ Աստուած՝ ո՛րչափ խնամք  
ցուցուցեր է իրեն ընտրած ժողովրդին նախապետնե-  
րուն վրայ, ի՛նչպէս փորձեր ու հաստատեր է նոցա  
հաւատքը, ի՛նչպէս կրթեր է զանոնք աստուածաշտուծեան  
ու առաքինուծեան մէջ, ու ի՛նչ կերպով նոցա բարեպաշտու-  
ծեան վարձքը տուեր է նաեւ այս աշխարհիս մէջ:

Այսուհետեւ կպտով մեզի Մովսէս մարգարէն այն աստուա-  
ծային նախախնամուծեան զանազան կարգադրուծիւններն  
ու անսպառ ողորմուծեան եւ անհասանելի արդարուծեան նը-  
շանները որ ցուցուց այն իւր ընտրած ժողովրդեան, այսինքն  
Իսրայէլացւոց վրայ, յերբոր հանեց եգիպտոսէն որ տանի՞ քա-  
նանացւոց երկիրը բնակեցընէ ու մեծ եւ զօրաւոր ազգ մը ը-  
նէ, ինչպէս որ խոստացեր էր Աբրահամու, Իսահակայ եւ Թա-  
կոբայ: Այս պատմութեան մէջ ալ խիստ շատ խրատ կայ առ-  
նելու մեզի, պատուական ժողովականք: ուստի՛ մտէ՛կ ուշա-  
դրուծեամբ եւ սիրով պպտմեմք ու մտիկ ընեմք որ հասկընամք  
նաեւ օրինակներով թէ Աստուծոյ կամքը՝ ո՛րն է եւ ի՛նչպէս  
կատարելու է որ մարդս երջանիկ լինի յաստիս եւ իհանդեր-  
ծեալն: ամայ իոյմնց թիմն մլայն մա՛ռծմովամ մեզի զո շն

Յակոբ նահապետը Քանանացւոց երկրէն ելլելով՝ եգիպտոս որ եկաւ, բոլոր իւր ազգատոհմը՝ ծառաներովն ու աղախիններովը մէկտեղ՝ 75 հոգի էր: Նոքա որ վախճանեցան հետ զհետէ, նոցա որդիքն ու թոռները այնչափ աճեցան, շատցան ու զօրացան որ եգիպտոսի թագաւորները սկսան անոնցմէ վախնալ: Այս վախը յայտնի նշան է այն թագաւորաց բռնաւորական կառավարութեանն ու անիրաւ վարմունքին. ապա թէ ոչ, պէտք չէ՞ր որ ընդ հակառակն ուրախանային որ եմէ իրենց երկրին մէջ այն հիւր ( միւսաֆիր ) եկած աշխատասէր, աչքաբաց ու հաւատարիմ ժողովուրդը կաճի կմեծնայ կուժովնայ, անով իրենց տէրութեանն ալ հարստութիւնը, վաճառականութիւնը, եկամուտները կշատցնէ: Գոնէ պէտք չէ՞ր որ նոցա օտար ու պատուաւոր ազգ մը եղածին համար՝ նոցա տրուած ազատութիւնները հաստատ պահէին, ու նոցա հաւատարմութիւնը տեսնելով՝ աւելցնէին ալ այն ազատութիւններն ու առանձնաշնորհութիւնները, ինչպէս որ կընեն այժմու բարեկարգ եւ արդարասէր տէրութիւնները, — որոց մէջ առաջին տեղն ունի մեր Օգոստափառ Ինքնակալին յիրաւի լուսաւորեալ կառավարութիւնը: — Գոնէ պէտք չէ՞ր որ Յովսէփ նահապետին յիշատակին համար, նորա իրենց երկրին ատենով ըրած մեծամեծ աղէկութեանցը համար, սիրով ու գթութեամբ վարուէին նորա սերունդին՝ այսինքն Իսրայէլացւոց հետ: — չ, մարդկային ազգիս բնական եղած պարպխտութիւնը, ուրիշէն տեսած աղէկութիւնը մոռնալու բնութիւնը, նոցա վրայ ալ երեւցաւ: — «Եկաց այլ թագաւոր որ ոչ գիտէր զՅովսէփ» կըսէ սուրբ գիրքը: Այսինքն մէկ թագաւոր մը տիրեց՝ եգիպտոսի որ Յովսէփը չէր ճանչնար. ըսել է թէ կամ յիմար էր եւ կամ չար: յիմար էր՝ թէ որ տգէտ լինելով իւր երկրին՝ պատմութեանը չէր գիտեր թէ Յովսէփ ինչ մարդ էր եւ ինչ աղէկութիւններ ըրեր էր իւր տէրութեանը: կամ թէ չար ու անզգամ մարդ էր՝ թէ որ իրեն նախանձո՛ւն միայն մտիկ ընելով կամաւ մոռցեր



էր Յովսեփայ աղէկուծիւնները: Ո՛րն ալ լինի՝ զարմանք չէ՛ վասն զի աշխարհիս վրայ երկու տեսակ մարդիկ ալ կգտնուին:

Խորհուրդ ըրաւ Թագաւորը իւր իշխաններուն հետ ու ըսաւ անոնց Թէ «Կտեսնէ՞ք սա Իսրայէլացիները, ի՞նչ մեծ ու զօրաւոր ազգ եղան. ի՞նչ պիտի ընեմք Թէ որ սոքա աւելի ալ բազմանան ու մեզի դէմ պատերազմ մը բացուելուն պէս՝ մեր Թըշնամեաց կողմը անցնին: Ուրեմն եկէք այս Ժողովրդեան օ՛ր չցուցընեմք. այնպէս չարչարեմք զիրենք որ ոչ ոյժ մնայ իրենց վրայ, ոչ հարստութիւն»: Այս մտքով դրաւ նոցա վրայ անողորմ գործավարներ կամ պաշտօնատէրներ որ նեղութիւն ու չարչարանք տան Իսրայէլացոց, աշխատցընելով զանոնք քաղաքներու պարիսպներ եւ ուրիշ Թագաւորական շէնքեր շինելու:—Յայտնի բան է որ անգուծ եւ անխիղճ իշխանաւորը շատ անգամ նաեւ իրմէ մեծ ին կամացն ու հրամաններուն հակառակ՝ նեղութիւն կուտայ իւր ձեռքին տակը գտնուող խեղճերուն. հապա ի՞նչ պիտի ընէ երբոր նոյն իսկ մեծն ալ ապսպրէ իրեն որ չարչարէ իւր հպատակները:—Ուստի եւ եգիպտացիք այն աստիճանի տառապանք ու չարչարանք հասուցին Իսրայէլացոց որ բոլորովին զգուեցան ասոնք իրենց բռնաւորներուն ձեռքէն. «Եւ գարշեցուցանէին եգիպտացիք զորդիսն Իսրայէլի»: Եւ սակայն Հրեաները ո՛րչափ որ աւելի չարչարանքի մէջ կիյնային՝ այնչափ ալ աւելի կշատնային:

Տեսաւ Թագաւորն որ չարչարանքով պիտի չկարենայ Հրեաները քիչցընել. զանոնք շարդելու հնարքը մտածեց: Հրաման ըրաւ՝ մանկաբարձներուն, այսինքն դայեակներուն, որ Իսրայէլացոց մէջ ո՛րչափ մանչ տղայ որ ծնանի, իսկոյն մեռցընեն: Մանկաբարձները Աստուծոմէ վախցան, Թագաւորին անգուծ հրամանը չկատարեցին: Աստուած՝ ալ իրենց՝ բանը՝ յաջողեց կրսէ սուրբ գիրքը. «Եւ բարի առնէր Աստուած՝ մանկաբարձացն»: Այն ատեն ընդհանուր հրաման հասնեց Թագաւորը բոլոր

իւր ժողովրդեանն ու ապսպրեց որ Եբրայեցւոց մէջ ո՛րչափ մանչ տղայ որ ծնանի, առնուն գետը ձգեն:

Այն ատենները Իսրայէլացւոց մէջ Ղեւիի ցեղէն մարդ մը կար՝ Ամրամ անունով, իւր կինն ալ նոյն ցեղէն էր: Սոքա մանչ զաւակ մը ունեցան, ու տեսնելով որ առողջ ու կայտառ տղայ է՝ երեք ամիս պահեցին որ եգիպտացիք չիմանան ու չառնուն ձեռքերէն: Երբոր աւելի երկար պահելու ճար չունեցան, մայրը պրտուէ՛ այսինքն եղեգէ կամ սագէ սնտուկի ձեւով բան մը հիւսեց, կարածիւթով ծփեց, տղան մէջը դրաւ, ու նեղոս գետին եզերքը՝ ջրին տարածուած ու հանդարտ կեցած մէկ կտորին մէջ ձգեց. տղուն քոյրն ալ Մարիամ հեռուէն կնայէր որ ինչ պիտի լինի:

Քիչ մը ատենէն Փարաւոն Թագաւորին աղջիկը գետը իջաւ լուացուելու, մինչդեռ իւր աղախինները գետին եզերքը կքաւին. տեսաւ այն սնտուկն ու աղախիններէն մէկը զրկեց որ երթայ՝ իրեն բերէ. բացաւ տեսաւ որ մէջը տղայ մը պառկած կուլայ: Սիրտը կտրտեցաւ. «Հրէից տղոցմէն պիտի լինի» ըսելով կեցած էր, տղուն քոյրը մօտեցաւ հարցուց թէ «Կուզե՞ս երթամ Եբրայեցի կնիկմարդ մը կանչեմ որ այդ տղան առնու քու հրամանովդ մեծցընէ: — Աղէկ կլինի» ըսաւ Փարաւոնի աղջիկը. նա ալ գնաց տղուն մայրը բերաւ: Ապսպրեց անոր որ տղան առնու մեծցընէ իրեն համար, եւ «ես քու վարձը կուտամ» ըսաւ: Բայց միթէ տղուն մօրը անկից աւելի վարձ կրնա՞ր լինել որ իւր զաւակը մահուանէ ազատեցաւ ու Փարաւոնի աղջկանն ալ որդեգիր՝ հոգեզաւակ եղաւ:

Երբոր տղան մեծցաւ՝ քանի մը տարեկան եղաւ, առաւ տարաւ զինքը մայրը Փարաւոնի աղջկանը, նա ալ տղուն անունը դրաւ Մովսէս, որ եգիպտացւոց լեզուովը ջր է հանուած ըսել է: Հոն պալատին մէջ մնաց Մովսէս, ու ամէն տեսակ ուսմունք եւ ճարտարութիւն սովորեցաւ՝ ինչ որ այն ատենի մեծամեծաց որդիքը կտվրէին. բայց խելքը միտքը իւր ազգակա-

կանացն ու ազգակից եղբարցը հետ էր, որ որչափ ալ աղքատութեան ու խեղճութեան մէջ էին, դարձեալ շատ աւելի սիրելի էին իրեն՝ քան թէ Փարաւոնի պալատն ու պալատականները. վասն զի ուսումն ու գիտութիւնը ոչ հպարտութիւն տրւեր էին Մովսիսի եւ ոչ թեթեւամտութիւն ու ապերախտութիւն, այլ լուսաւորութիւն մտաց եւ ուղղութիւն սրտի, որով չմոռցաւ իւր ազգը եւ ընտանիքը:

Երբոր Մովսէս մեծցաւ մարդ եղաւ, Իսրայէլացոց մէջ սկսաւ մտնել, վասն զի նոցա չարչարանքը տեսնելը իրեն մեծ անհանգստութիւն էր. կուզէր որ ձեռքէն ի՛նչ աղէկութիւն որ գայ՝ ընէ անոնց: Օր մը տեսաւ որ եգիպտացիին մէկը Իսրայէլացի մը բռնե՛ր՝ չարաչար կծեծէ. ասդիս անդին նայեցաւ, տեսաւ որ մարդ չկայ, զարկաւ սպաննեց եգիպտացին ու աւագին մէջը թաղեց:

Երկրորդ օրը ելլէ տեսնէ որ երկու Իսրայէլացի մէկմէկու հետ կեցեր կծեծկուին. «Մա՛րդիկ, ըսաւ, դուք իրարու եղբայր էք, ինչո՞ւ կծեծկուիք»: Անոնցմէ մէկը, որ աւելի կատաղին էր, դառնայ ի՛նչ ըսէ Մովսիսի. «Քեզ ո՞վ դրաւ մեր վրայ իշխան կամ դատաւոր. չէ նէ մի զիս ալ մեռցընել կուզես՝ ինչպէս որ երեկ եգիպտացին մեռուցիր»: — Այս դիպուածը եւ այս խօսքը ո՛րչափ ճիշդ կնշկարագրէ մեզի այն ժողովրդոց վիճակն որ օտարի ձեռքին տակը չարչարանքէ խեղճութենէ աչք չեն բանար, եւ սակայն ոչ միայն իրարու հետ անդադար կկրճուրտին, իրարու միս կուտեն, այլ եւ եթէ իրենցմէ մէկը ուզէ մէջերնին հաշտութիւն ձգել՝ յանցաւորի պէս կմերժուի. «ո՞ կացոյց զքեզ այր իշխան եւ դատաւոր իվերայ մեր. եթէ սպանանե՞լ զիս կամիցիս որպէս երեկ սպաներ զեգիպտացին»:

Սարսափեցաւ Մովսէս՝ երբոր տեսաւ որ իւր ըրած սպանութիւնը տեսնող եղեր է, եւ այն տեսնողն ու մատնողը իւր ազգէն մէկն է. կէս մը Փարաւոնի վախէն — որ ետեւէ էր զինքը

բռնելու մեռցընելու, — կէս մ'ալ անշուշտ իւր ազգակիցներէն զզուելով, ձգեց փախաւ Մաղիանացւոց երկիրը: Եւ մասնաւոր  
ներքոյ այն տեղը շրիորի մը բովնստած էր, Մաղիանացւոց  
քրմին՝ այսինքն քահանային ետե՛ր աղջիկները ու եկան որ իրենց  
ոչխարներուն ջուր խմցընեն: Այն միջոցին ուրիշ հովիւներ գե-  
կան, մէկդի բշեցին զանոնք: Մովսէս վեր ցատքեց, արդարու  
Թենէն եւ գթասիրուԹենէն շարժած՝ վառնոց հովիւներն ու  
քրմին ոչխարներուն ջուր տուաւ: Տուն որ դարձան, հարցուց  
հայրերնին Թէ «Այս ի՞նչպէս եղաւ որ այսօր արեւով եկաք. —  
Ձի՞ է զի յարեւու եկիք այսօր: — Եգիպտացիին մէկը ազատեց  
զմեզ հովիւներուն ձեռքէն ու մեր ոչխարներուն ջուր տուաւ»  
ըսին. «Հապա ինքը ո՞ւր է, ըսաւ հայրերնին. ինչո՞ւ Թողուցիք  
ու հացի չկանչեցիք զինքը»: Մովսէս այն քրմին տունը հար-  
կուելէն ետեւ հոն կեցաւ, փեսայացաւ քրմին ու անոր ոչխար-  
ները կարծեցընէր: Փարաւոնի աղջկան որդեգիրը, Թագաւո-  
րական պալատի մէջ մեծցած պատանին, եգիպտացւոց իմաս-  
տուններուն ամէն գիտութիւնները սովորած երիտասարդը, ան-  
նպատ օտար երկրի մը մէջ ոչխարներու հովիւ մը դարձաւ  
իբրեւ մարդասպան փախտական, իւր ազգէն մերժուած՝ «Քեզ  
ո՞վ դրեր է մեզի իշխան կամ դատաւոր» խօսքը չմոռնալով,  
եւ օտարներէն, մանաւանդ Թէ տէրուԹենէ ու Թագաւորէ մը  
փնտռուած ու հալածուած: Աշխարհքէ ու մարդիկներէ զզուած  
ծերու մը պէս՝ կոտրած էր այն երիտասարդին սիրտը. ուստի  
եւ անդրանիկ զաւակին անունը Գերսամ դրաւ, որ պան-  
դուխտ (խարիպ) կնշանակէ: Աստուծոյ առջեւ խղճմտանքը  
մաքուր էր եւ սիրտը ուղիղ. անոր համար կրնար յուսալ Թէ իւր  
անմեղութիւնը օր մը չէ նէ օր մը երեւան պիտի ելլէ. բայց  
կրնա՞ր արդեօք մտքէն անգամ անցընել Թէ Աստուած զինքը  
ընտրեր է իրեն ընտրած ժողովրդեանը, այսինքն Խարայեւացւոց՝  
որ այն ատենը 600 հազար հոգի էին՝ ոչ միայն իշխան եւ դա-  
տաւոր, այլ եւ հրաշագործ պապտիչ, սքանչելի օրէնսդիր, ան-

տոնածանոթս եւ այտոյն լածախօս մարգարէ, թագաւորները ղո-  
ղացընող, վատերն զմեներն, յաղթող, ցամաքի վրայ շրի վրայ,  
կենդանեաց եւ մարդկանց վրայ իւր հաւատքովն ու զարմանա-  
լի իշխանու թեամբը տիրող տիրապետող եւ անվրէպ հրաման-  
ներ տուող: Մովսէսի մտքէն չէր անցներ, բայց Աստուած ի-  
յաւիտենից սահմաններ էր այս բաները, եւ պէտք էր որ կա-  
տարուէին: Աստուծոյ վճռոյն եւ կամացը ղէմ ոչ հալածանքը  
ոյժ ունի, ոչ բամբասանքը, ոչ նախանձը, ոչ ապերախտութիւնը:  
Տեսնեմք այժմ թէ ի՞նչ կերպով սկսաւ Աստուած իւր ամենա-  
սուրբ կամբը կատարել Մովսէսին վրայ: Վայն ցոմն ծայրոսս  
Մէկօր մը Մովսէս իւր աներօջը, ոչխարները արծեցընելով  
քջեց տարաւ Քորէք լեռան վրայ: Մէյմալ տեսնէ որ ղիմացի  
մորենիներէն՝ այսինքն տանկերէն պէտք իրթէն ըսուած թու-  
փերէն մէկը կրակ յառեր բռնկեր կվառի ու չայրիր: Երկար ան-  
տեն զարմացած վրան նայելէն ետեւ կըսէ Մովսէս ինքնիրեն  
թէ «Երթամ տեսնեմ, այն ի՞նչ զարմանալի բան է որ մորենի  
բռնկեր է կվառի ու չայրիր»: Կըսէ սուրբ գիրքը թէ այն մո-  
րենիին մէջ կրակի ու բոցի պէս երեցողը Աստուծոյ հրեշտա-  
կըն էր: Երբոր Մովսէս գնաց մօտեցաւ մորենիին, ձայն եկաւ  
իրեն անոր մէջէն թէ «Մովսէս, Մովսէս: — Ի՞նչ կայ: — Մի՛ գար  
այս տեղս: Կօշիկներդ հանէ տոքէդ, վասն զի կեցած տեղը  
սուրբ տեղ է: Ես բու հարցդ Աստուծոն եմ: Աբրահամու, Ի-  
սահակայ եւ Յակոբայ Աստուծոն եմ ես»: Ի՞նչ մասնատու չմ  
«Զարհուրեցաւ Մովսէս, ու երեսը մէկդի դարձուց, վասն զի  
Աստուծոյ անշեւը աչքը բանալու կվախնար: Կըսէ սուրբ գիր-  
քը: — Եւ ղարձոյց Մովսէս գերեսս իւր, քանզի երկնէն հայել ան-  
ուաջի Աստուծոյ»: Զայն եկաւ դարձեալ մորենիէն, ու ըսավ Մով-  
սէսի. «Տեսայ ես իմ ժողովրդեանս քաշած չարչարանքը եգիպտոս  
սի մէջ, ոչ ոցա՞նդ անդակը հասաւ ինձի, եւ մահա իջայ որ փրկեմ  
զիրենք եգիպտացոց ձեռքէն, հանեմ եգիպտոսէն ու այնպիսի  
բարեբեր ընդարձակ երկիր մը տանիմ որ կամ ոչ մեղը կըխի

ամէն կողմէն, այսինքն՝ Քանանացւոց երկիրը: Ուստի եկ զրկեմ զքեզ եգիպտոսի Փարաւոն թագաւորին, որ հետը խօսիս ու ժողովուրդս հանես անոր երկրէն»: Սոփսիոսի խօսքն ըստ Սոփսիոսի  
Մովսէս սարսափած՝ պատասխան տուաւ թէ՝ «ես ո՞վ եմ որ եգիպտացւոց Փարաւոն թագաւորին երթամ ու իսրայէլացիները հանեմ եգիպտոսէն»: Այս ըսելու ատեն անշուշտ միտքը եկան ատենով իւր գլխէն անցածները: Բայց Աստուած խօսքը կտրեց. «ես եղէց ընդ քեզ» ըսաւ.—ես քու հետդ կլինիմ: Ասոր վրայ պէտք էր որ Մովսէս մէկէն իմէկ հաւանութիւն տար. երբոր Աստուած հետը լինի, ինչէ՞ն պիտի վախնար. թէպէտ եւ յանդիմանութիւն, սաստ, պատիժ, հալածանք, ապերախտութիւն քաշելու լինէր, միթէ պէ՞տք էր որ վախ ցուցնէր: Մովսէս Մովսէս, չն՞ս տեսներ որ այդ մորենին բռնկեր է ու կվառի, բայց չայրիր. վասն զի Աստուած անոր մէջն է. ուրեմն ինչէ՞ն կվախնաս՝ երբոր Աստուած ալ քու հետդ է: Աղքատներ, հիւանդներ, չարչարողներ, զրպարտողներ, չէ՞ք տեսներ այն մորենին. թէ որ դուք ալ զԱստուած ունիք հետերնիդ, չէք այրիր. ինչէ՞ն կվախնաք: Այս խօսքն ըստ Սոփսիոսի  
Բայց Մովսէս ալ մարդ էր եւ իւր տկարութիւնը աղէկ ճանչցող մարդ. դարձաւ ըսաւ Աստուծոյ. «Ըսեմք թէ ես ելայ գնացի իսրայէլացւոց ըսի թէ ձեր հարց Աստուածը յուղարկեց զիս. թէ որ նոքա հարցընեն ինձի թէ անոր անունը ի՞նչ է, ի՞նչ պատասխան պիտի տամ»: Այս հարցմունքէն այնպէս մը կերելի թէ ինքն իսկ Մովսէս կողմէր ստուգել թէ արդեօք այն իրեն եղած յայտնութիւնը իրացընէ աստուածային յայտնութիւն է թէ լոկ երեւոյթ կամ երեւակայութիւն. կամ թէ գիտնալով որ իսրայէլացւոց մէջ ալ սկսեր էր ճշմարիտ աստուածապաշտութիւնը մոռցուիլ ու եգիպտացւոց կռապաշտութիւնն ու բազմաստուածութիւնը մոռնել, հարկաւոր կճանչնար որոշ կերպով մը հասկըցնել նոցա թէ նոր կամ օտար Աստուած մը չէ զինքը զրկողը, հապա բուն իրենց հարց եւ նախնեաց պաշտած

Աստուածն է: Աստուած պատասխան տուաւ Մովսիսի թէ՛ «ես եմ Աստուած Որ էն» . այսինքն ես այն Աստուածն եմ որ կամ, միշտ եղած եմ ու միշտ պիտի լինիմ: — Որ էն բառը Աստուծոյ անունը չէ, հապա աստուածային բնութեան յաւիտենականութիւնը, անեղութիւնն ու անփոփոխութիւնը ցուցնող գեղեցիկ խօսք մը: Ըսել կուզէր թէ ես այն Աստուածն եմ որ ասկէց 400 տարի առաջ Աբրահամու, յետոյ Իսահակայ եւ Յակոբայ խոստացեր եմ որ իրենց զաւակները հանեմ ազատեմ եգիպտոսէն . ըսէ Իսրայէլացեաց որ այն անփոփոխ յաւիտենական Աստուածը, այն Որ էնը ղրկեց զիս:

Այս անունին երբայցերէնն է եհիովահ, եւ Աստուածաշնչին մէջ շատ կգործածուի. բայց Հրեայք աւելորդապաշտ կարծիքով մը դրած են մտքերնին թէ այս անունը ոչ միայն բերան առնել չլինիր, հապա նաեւ ասոր ուղիղ հնչմունքն անգամ չբացիտցուիր: Ըսել կուզեն որ թէպէտ չորս տառով կգըրուի, եհւհ, բայց չեն գիտեր թէ ի՞նչպէս կարդալու է. եհիովահ թէ եհւէհ, թէ եհօ կամ եահօ եւ այլն. ուստի եւ անթարգմանելի կամ անգառելի անուն Աստուծոյ կըսեն ասոր: Միայն քահանայապետը տարին մէկ անգամ մը, այսինքն քառութեան տօնին, երբոր սրբութիւն սրբոց ըսուած խորանը կմտնէր, այս անունը կուտար Աստուծոյ: Այս անհիմն կարծիքով մինչեւ հիմա Աստուածաշնչին մէջ ո՛ւր որ այս անունը գրուած կտեսնեն՝ եհիովահ կարդալու տեղը ատօնա՛յի կկարդան, որ Տէր իմ կնշանակէ: — Թալմիտին մէջ այս ալ գրած են թէ ով որ Աստուծոյ անունը կարդալու գաղտնիքը ( սէքրէթը ) գիտնայ, մեծամեծ հրաշքներ կրնայ գործել. եւ այս խախուտ հիման վրայ կաւելցընեն ուրիշ սուտ համբաւ մը որ իբր թէ Քրիստոս Տէրն մեր այն գաղտնիքը գիտնալովն է եղեր որ իւր աստուածային հրաշագործութիւններն ըրեր է:

Ապսպրեց Աստուած Մովսիսի որ երթայ առաջ Հրէից ծերերուն ու գլխաւոր իշխաններուն յայտնէ իւր ի՞նչ բանի համար ղըրկուած լինելը, ետքը հետը առնու զանոնք ու Փարաոնն թագա-





ցը Աստուածն է» ըսաւ. որ անշունչ անկենդան փայտի կտորը  
օձ դարձընել միայն չէ, քեզի պէս տկար մարդը հրաշագործ  
մարգարէ մը դարձընել միայն չէ, հապա նաեւ ոչնչէ ստեղծել  
կրնայ ամէն բան իբրեւ ամենակարող էակ. եւս առաւել իւր  
Ժողովուրդը Փարաւոնին պէս օձի նման խորագէտ բռնաւորի  
մը ձեռքէն ազատել:— Դարձեալ, «Ձեռքդ ծոցդ դիր» ըսաւ Աս-  
տուած. Մովսէս ալ դրաւ ու հանեց, տեսաւ որ ձիւնի պէս բո-  
րոտեր է: Նորէն ծոցը դնել ու հանել տուաւ, տեսաւ որ առջինին  
պէս մաքուր մարմնոյ գոյն է: «Թէ որ Հրեայք առաջին նշանը տես-  
նեն ու խօսքիդ չհաւատան, այս նշանն ալ կրնես իրենց առջե-  
ւը» որ իմանան թէ զմարդիկ նեղութեան մէջ ձգողն ալ ես եմ,  
այն նեղութենէն ազատողն ալ ես: Հրեաները եգիպտոս դրկողն  
ալ ես, անկից հանողն ալ ես: Թէ որ այդ երկու նշաններուն ալ  
չհաւատան, գետէն ջուր առ, ցամաքին վրայ թափէ, այն ջու-  
րը արիւն կդառնայ». որ կնշանակէ թէ եգիպտացիք զձեզ սի-  
րով իրենց երկրէն չարձըկեն նէ, մեծամեծ պատիժներ կրնան  
գալ իրենց գլխուն:

Ասոնք ամէնն ալ աղէկ. բայց Մովսէս այն մարդիկներէն չէր  
որ անունի, աստիճանի, պատուոյ, իշխանութեան ետեւէն հոգի  
կուտան: Իրեն խոնարհ՝ առանձնակեաց՝ հանգիստ հովուութիւնը  
աւելի քաղցր էր իրեն համար քան թէ աստուածախօս մարգարէ,  
աստուածառաք պատգամախօս, հրաշագործ առաջնորդ, ամբողջ  
ազգի մը ազատարար, հզօր թագաւորի մը հետ վիճաբանող, ահա-  
գին տէրութեան մը առջեւ իւր ազգին դեսպանը լինելը: Դարձաւ  
ըսաւ Աստուծոյ թէ «Կաղաչեմ զքեզ Տէր. ես այդ բաներուն մարդը  
չեմ. ոչ ատենով ըրեր եմ այդ բաները եւ ոչ այժմ պիտի կա-  
րենամ գլուխ հանել, վասն զի ոչ ձայնս զօրաւոր է եւ ոչ լե-  
զուս արձակ.— Զի նրբաձայն եւ ծանրալեզու եմ ես»: Աստուած  
պատասխան տուաւ իրեն թէ «Մարդուն լեզու բերան տուողը  
ո՞վ է, կամ թէ խուլն ու համրը, աչք ունեցողն ու կոյրը ո՞վ  
ստեղծեր է. ո՞չ ապաքէն ես Աստուած. գնա ուրեմն, ես կբա-



76

0023390

2013

